ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/20»

ք. Երևան « 04 » 04 2018 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինարար-97» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հովհաննես Ահարոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի (պարսպապատ) ամրակայման, վերականգնման, տարածքի բարեկարգման (ենթակառուցվածքների զարգացման) աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **01.11.2018 թ.:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան, ***ապահովելով նաև իրականացվող աշխատանքների ընթացքի տեսախցիկներով մշտական առցանց վերահսկում:***

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի

[illegible]ոդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ [illegible]աղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի

[illegible]ջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման [illegible]ծանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 16 576 800 (տասնվեց միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, որից 2 762 800 (երկու միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից htmn և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների htm:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց htmn, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ՍՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած t t լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է __16__ էջից, կնքվում t երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում t մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011017630 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Շինարար -97» ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 2913 Էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com հեռ.՝ 093030366 ՀՎՀՀ 05510886, հ/հ 205012200981 «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ
Աշխատակազմի ղեկավար՝ _____ Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն՝ Հ. Ահարոնյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 1
«04» 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/20» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]*

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի (պարսպապատ) ամրակայման, վերականգնման, տարածքի բարեկարգման (ենթակառուցվածքների զարգացման) աշխատանքների կատարման

հազար ՀՀ դրամ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	Վերականգնողական աշխատանքներ				
	Լ-Խ հատված				
	Մետաղական խողովակնորով արտաքին տախտակամածի կապում և քանդում	100մ^2	0,27	153,21	41,37
	Հարթ երեսապատի քանդում վերաշարում ճեղքված կապտատաշ բազալտե քարից	մ^2	2,53	63,73	161,25
5	Հին կրաշաղախի լիցքի քանդում հեռացում	մ^3	0,76	20,34	15,46
6ա	Պարսպապատերի պահպանված հատվածների կարանների լվացում ճնշումով ջրի շիթով	10մ^2	2,05	9,22	18,91
6բ	Պարսպապատերի պահպանված հատվածների կարանների խորը կարանախցում կրացեմենտային ավազային բարդ շաղախով	10մ	10,20	15,52	158,35
	Պարսպապատերի հարթ երեսապատերի քարերի նոր տաշ ու շար կոպտատաշ բազալտից	մ^2	16,20	105,55	**1709,85**
10	Նույնի վերաշար	մ^2	1,70	38,59	65,61
20	Երեսապատի քարերի ետևում լիցքի կատարում խամքարով և բարդ կրաշաղախով	մ^3	6,00	57,28	343,65
	Խ-Ծ հատված				
	Մետաղական խողովակնորով արտաքին տախտակամածի կապում և քանդում	100մ^2	0,58	153,21	88,86
	Հարթ երեսապատի քանդում վերաշարում ճեղքված կապտատաշ բազալտե քարից	մ^2	6,30	65,90	415,19
5	Հին կրաշաղախի լիցքի քանդում հեռացում	մ^3	6,60	20,34	134,23
6ա	Պարսպապատերի պահպանված հատվածների կարանների լվացում ճնշումով ջրի շիթով	10մ^2	2,20	9,22	20,29
6բ	Պարսպապատերի պահպանված հատվածների կարանների խորը կարանախցում կրացեմենտային ավազային բարդ շաղախով	10մ	11,00	15,52	170,77
	Պարսպապատերի հարթ երեսապատերի քարերի նոր տաշ ու շար կոպտատաշ բազալտից	մ^2	23,40	105,55	2469,79
10	Նույնի վերաշար	մ^2	3,40	38,59	**131,22**
20	Երեսապատի քարերի ետևում լիցքի կատարում խամքարով և բարդ կրաշաղախով	մ^3	10,20	57,28	584,21
21	Բուտաբետոնե լիցքի կատարում բազալտեվ քարով	մ^3	65,87	**55,40**	3649,31
25ա	Ջրի տեղափոխում տակառների լցոնումով և տեղափոխում 1411 հեռ. վրա	տ	28,00	5,82	163,00
26	Շին աղբի բարձում մեքենաները ձեռքի գործիքներով	մ^3	1,20	2,11	2,53
26ա	Նույնը մեխանիզմով	100մ^3	0,11	5,40	0,58
27	Նույնի տեղափոխում մեքենաներով 5կմ հեռ վրա	տ	**20.50**	2,15	44,16
					10 388,6

[1] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

	1. Լոռի բերդ ամրոցի սպասարկման սրահի շինարարական աշխատանքներ				
1	Հիմքերի քանդում 4-րդ կարգի գրունտներում մեխանիզմով	$մ^3$	20,0	1,05	21,06
2	Հիմքերի քանդում 4-րդ կարգի գրունտներում ձեռքով	$մ^3$	2,1	6,22	13,06
3	Հողի հետլիցք տոփանում, ձեռքով	$մ^3$	9,8	1,33	13,03
4	Ավելորդ հողի բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում 5կմ	$մ^3$	9,2	5,13	47,22
5	Բուտաբետոնի հիմքերի կառուցում B12.5 դասի բետոնով	$մ^3$	19,4	55,39	1074,59
6	Միաձույլ ե/բ հիմքերի կառուցում B 20 դասի բետոնով	$մ^3$	9,14	107,90	986,18
7	Ամրան A I դասի	տ	0,110	666,83	73,35
8	Ամրան A III դասի	տ	0,490	666,83	326,75
9	Միաձույլ ե/բ սյուների կառուցում B20 դասի բետոնով	$մ^3$	4,32	134,63	581,62
10	Ամրան A I դասի	տ	0,100	666,83	66,68
11	Ամրան A III դասի	տ	0,300	666,83	200,05
12	Միաձույլ ե/բ հեծանների կառուցում B20 դասի բետոնով	$մ^3$	7.7	127.17	979,19
13	Ամրան A I դասի	տ	0,140	666,83	93,36
14	Ամրան A III դասի	տ	0,480	666,83	320,08
15	Պատի շարվածք կոպտատաշ բազալտե քարից 400մմ հաստությամբ	$մ^3$	54,9	71,52	3926,33
16	Պատերի ամրանավորում A I դասի	տ	0,070	666,83	46,68
17	Միաձույլ ե/բետոնե ծածկի իրականացում B20 դասի բետոնով	$մ^3$	5,9	126,14	744,21
18	Ամրան A III դասի	տ	0,470	666,83	313,41
19	Միջնորմի կառուցում h=200մմ հաստությամբ պեմզաբլոկով	$մ^3$	3,80	32,76	124,50
20	Միջնորմի կառուցում h=100մմ հաստությամբ պեմզաբլոկով	$մ^2$	26,0	4,45	115,63
21	Ամրան A I դասի	տ	0,040	762,19	30,49
	2. Տանիք			0,00	0,00
25	Փայտե կարկասի կառուցում կավարամածի հետ միասին	$մ^3$	1,50	348,58	522,86
26	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանության	$մ^3$	1,50	17,55	26,32
27	Ծածկի իրականացում գունավոր մետաղական պրոֆիլով	$մ^2$	62,20	8,71	541,62
27՝	Տանիքի ջրահեռացման խողովակ	մ	4,0	5,11	20,42
	3. Ներքին հարդարման աշխատանքներ			0,00	0,00
1	Խճի շերտի իրականացում, տոփանումով, h=10սմ	$մ^3$	3,9	20,25	78,96
2	Բետոնի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ	$մ^3$	3,9	62,00	241,81
3	Ամրան A III դասի	տ	0,252	666,83	168,04
4	Ցեմենտավազային հարթեցնող շերտի 3սմ հաստությամբ	$մ^2$	39,3	1,87	73,68
5	Պրեսգրանիտե սալիկների իրականացում, ամրացված սոսնձով	$մ^2$	39,30	12,11	475,82
6	Պատերի սվաղում գաջե շաղախով	$մ^2$	170,0	3,42	581,99
7	Առաստաղների սվաղում գաջե շաղախով	$մ^2$	170,00	1,73	294,78
	4. Տարածքի մասնակի բարեկարգում			0,00	0,00
1	Հիմքերի քանդում 4-րդ կարգի գրունտներում ձեռքով	$մ^3$	0,692	6,22	4,30
2	Հիմքերի կառուցում B15 դասի բետոնով	$մ^3$	0,692	73,91	51,15
3	Ցանկապատի իրականացում մետաղական խողովակներով	տ	0,41	101,05	40,93
4	Մետղական խողովակներ 100x100, 5մ-6հատ	մ	30,0	10,41	312,15
5	Մետղական խողովակներ 40x40, 0.8մ-15հատ	մ	12,0	2,07	24,81
6	Մալուխ այլումինե ջիղերով, հատվածքը 2,5մմ^2	մ	60,0	0,28	16,63
7	Պոլիէթիլենային էլեկտրոտեխնիկական գոֆրե խողովակ Ø32մմ	մ	100,0	0,68	68,44

8	Տարածքի կանաչապատում նոր խոտաածածկով	$մ^2$	50,0	0,62	30,84
	ԸՆԴԱՄԵՆԸ				**13 673,0**
	ԸՆԴԱՄԵՆԸ ԸՍՏ ԵՐԿՈՒ ԲԱԺԻՆՆԵՐԻ				**24 061,6**

- Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011017630
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝
_____ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886,
հ/հ 205012200981
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ

Տնօրեն՝
_____ **Հ. Ահարոնյան**
(ստորագրություն)

Գյումրի Gyumri
«ՇԻՆԱՐԱՐ-97»
«Shinarar-97»
05510886

Հավելված թիվ 2
«04» 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/20» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԱՄՐՈՑԻ (ՊԱՐՍՊԱՊԱՏ) ԱՄՐԱԿԱՅՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ (ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՃԱՐԳԱՑՄԱՆ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
Վերականգնողական աշխատանքներ			
	Լ-Խ հատված		
1	Մետաղական խողովակներով արտաքին տախտակամածի կապում և քանդում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
3	Հարթ երեսապատի քանդում վերաշարում ճեղքված կապտատաշ բազալտե քարից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
5	Հին կրաշաղախի լիցքի քանդում հեռացում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
6ա	Պարսպապատերի պահպանված հատվածների կարանների լվացում ճնշումով ջրի շիթով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
6բ	Պարսպապատերի պահպանված հատվածների կարանների խորը կարանախցում կրացեմենտային ավազային բարդ շաղախով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
9	Պարսպապատերի հարթ երեսապատերի քարերի նոր տաշ ու շար կոպտատաշ բազալտից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
10	Նույնի վերաշար	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
20	Երեսապատի քարերի ետևում լիցքի կատարում խամքարով և բարդ կրաշաղախով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
	Խ-Ծ հատված		
1	Մետաղական խողովակներով արտաքին տախտակամածի կապում և քանդում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
3	Հարթ երեսապատի քանդում վերաշարում ճեղքված կապտատաշ բազալտե քարից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
5	Հին կրաշաղախի լիցքի քանդում հեռացում	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
6ա	Պարսպապատերի պահպանված հատվածների կարանների լվացում ճնշումով ջրի շիթով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
6բ	Պարսպապատերի պահպանված հատվածների կարանների խորը կարանախցում կրացեմենտային ավազային բարդ շաղախով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
	Պարսպապատերի հարթ երեսապատերի քարերի նոր տաշ ու շար կոպտատաշ բազալտից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
10	Նույնի վերաշար	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
20	Երեսապատի քարերի ետևում լիցքի կատարում խամքարով և բարդ կրաշաղախով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
21	Բուտաբետոնե լիցքի կատարում բազալտով քարով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
25ա	Ջրի տեղափոխում տակառների լցնումով և տեղափոխում 1կմ հեռ. վրա	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
26	Շին աղբի բարձում մեքենաները ձեռքի գործիքներով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
26ա	Նույնը մեխանիզմով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
27	Նույնի տեղափոխում մեքենաներով 5կմ հեռ վրա	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
	1. Լոռի բերդ ամրոցի սպասարկման սրահի շինարարական աշխատանքներ		
1	Հիմքերի քանդում 4-րդ կարգի գրունտներում մեխանիզմով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
2	Հիմքերի քանդում 4-րդ կարգի գրունտներում ձեռքով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
3	Հողի հետլիցք տուփանում, ձեռքով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.

4	Ավելորդ հողի բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում 5կմ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
5	Բուտաբետոնի հիմքերի կառուցում B12.5 դասի բետոնով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
6	Միաձույլ ե/բ հիմքերի կառուցում B 20 դասի բետոնով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ
7	Ամրան A I դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ
8	Ամրան A III դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ
9	Միաձույլ ե/բ սյուների կառուցում B20 դասի բետոնով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
10	Ամրան A I դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
11	Ամրան A III դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
12	Միաձույլ ե/բ հեծանների կառուցում B20 դասի բետոնով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018թ.
13	Ամրան A I դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
14	Ամրան A III դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
15	Պատի շարվածք կոպտատաշ բազալտե քարից 400մմ հաստությամբ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
16	Պատերի ամրանավորում A I դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
17	Միաձույլ ե/բետոնե ծածկի իրականացում 020 դասի բետոնով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
18	Ամրան A III դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
19	Միջնորմի կառուցում h=200մմ հաստությամբ պեմզաբլոկով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
20	Միջնորմի կառուցում h=100մմ հաստությամբ պեմզաբլոկով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
21	Ամրան A I դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
	2. Տանիք		
25	Փայտե կարկասի կառուցում կավարամածի հետ միասին	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
26	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանության	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
27	Ծածկի իրականացում գունավոր մետաղական պրոֆիլով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
27'	Տանիքի ջրահեռացման խողովակ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
	3. Ներքին հարդարման աշխատանքներ		
1	Խճի շերտի իրականացում, տոփանումով, h=10սմ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018
2	Բետոնի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
3	Ամրան A III դասի	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
4	Ցեմենտավազային հարթեցնող շերտի 3սմ հաստությամբ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
5	Պրեսգրանիտե սալիկների իրականացում, ամրացված սոսնձով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
6	Պատերի սվաղում գաջե շաղախով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
7	Առաստաղների սվաղում գաջե շաղախով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
	4. Տարածքի մասնակի բարեկարգում		
1	Հիմքերի քանդում 4-րդ կարգի գրունտներում ձեռքով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.

2	Հիմքերի կառուցում B15 դասի բետոնով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
3	Ցանկապատի իրականացում մետաղական խողովակներով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
4	Մետղական խողովակներ 100x100, 5մ-6հատ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
5	Մետղական խողովակներ 40x40, 0,8մ-15հատ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
6	Մալուխ ալյումինե ջիղերով, հատվածքը 2,5մմ²	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
7	Պոլիէթիլենային էլեկտրոտեխնիկական գոֆրե խողովակ Ø32մմ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
8	Տարածքի կանաչապատում նոր խոտածածկով	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	01.11.2018 թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011017630
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

_____ **Ս. Մուրադյան**
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
էլ.հասցե՝ hovnannes.aharonyan@gmail.com
հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886,
հ/հ 205012200981
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ

Տնօրեն՝

_____ **Հ. Ահարոնյան**
(ստորագրություն)

«ՇԻՆԱՐԱՐ-97»
«Shinarar-97»
05510886

Հավելված թիվ 3
2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/20» ծածկագրով պայմանագրի

« 04 » 04

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451600/6	ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի (պարսպապատ) ամրակայման, վերականգնման, տարածքի բարեկարգման (ենթակառուցվածքների զարգացման) աշխատանքներ	0	0	0	1077492	2154984	3315360	6050532	8785704	11603760	13261440	14919120	16576800	**16576800**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
հեռ.՝(011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011017630
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչությունում

Աշխատակազմի ղեկավար՝

Ս. Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարար -97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3
էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@gmail.com
Հեռ.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886, հ/հ 205012200981
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/ճ

Տնօրեն՝

Հ. Ահարոնյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
04 » 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/20» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

«Շինարար-97» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Գյումրի, Տեքստիլագործների 29Մ
էլ.հասցե՝ hovhannes.aharonyan@grnail.com
htn.՝ 093030366
ՀՎՀՀ 05510886, h/h 205012200981
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, Գյումրու Մ/Ճ

Պատվիրատու

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական շենք N 2,
htn.՝ (011) 58-51-78
ՀՎՀՀ *02508054*,
h/h 900011017630
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» _____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____»a 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
«04» 04 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/20» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն